ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՂՕԹԱԳՈՐԳԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒՆ

ԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ
amkhitaryan89@gmail.com

Առաջաւորասիական գորգերի շարքում առանձնայատուկ տեղ ունի խորանագորգը՝ կրօնածիսական նշանակութեան առարկայ, որը բնորոշւում է գեղազարդման համակարգի իւրայատուկ կառուցուածքով: Արդարեւ, խորան գծածեւով ներկայացող գորգերը ճանաչում ունեն որպէս աղօթքի գորգեր, կամ աղօթագորգեր[1], որոնք յայտնի են նաեւ *սեճատիպէ* անունով[2]: Սեճատախալի բառը յիշատակուած է Սիմէոն Դպիր Լեհացու (ԺԷ. դար) վկայութիւնում[3]: Այս տիպի գորգերը առանձնանում են ներյատուկ զարդայօրինուածքով՝ ճարտարապետական եւ զարդային տարրերով: Սրանք լինում են սիւնազարդ եւ առանց սիւների, վերջիններս աւելի ուշ շրջանում են ստեղծուել՝ պահպանելով միայն խորանախորշի ուրուագիծը: Ըստ Վոլֆգանգ Գանցհորնի՝ գորգերի այս անցումը տեղի է ունեցել 18րդ դարի առաջին կէսերում, երբ սկսում են աստճանաբար անհետանալ սիւները[4]: Այդուհանդերձ, սիւներով գորգեր յետագայում նոյնպէս գործուել են: Սիւնազարդ գորգերի պատկերման ձեւերը մօտ են եկեղեցիների ներքին կտրուածքին՝ սիւներով, շղթայակախ կանթեղով: Աղօթագորգերի երկրորդ տարբերակում՝ տարբեր գորգատեսակներ են, շրջանակուած կամարաւրուագծի մէջ, որտեղ հիմնականում բացակայում են սիւները:

Խորանաւոր աղօթքի գորգերը մահմեդական աշխարհում յայտնի են *նամազլիկ* անունով[5]: Այս գորգերը համարւում են յատուկ գորգ, որի վրայ մուսուլմանները կատարում են իրենց աղօթքը՝ նամազը: Կառուցուածքային ձեւը համապատասխանում է նպատակին: Ունեն կամարաձեւ խորշ՝ մահմեդական աշխարհում յայտնի *մեհրաբ* անուանումով՝ սլաքաձեւ

---

[1] Յարութիւն Քիւրտեան, *Գորգը հայոց մօտ*, Վենետիկ-Ս.Ղազար, 1947, էջ 45:

[2] *Սեճճատէ*՝ գորգ, որի վրայ աղօթում են մահմեդականները (Մ. Աբիկեան, *Գործնական բառարան տաճկերենէ հայերէն*, փորագրիչ Սերվիչէն տպագրութիւն եւ վիմագրութիւն, Կ.Պոլիս, 1893, էջ 282. նաեւ՝ Մխիթար աբբա, *Բառգիրք հայկազեան լեզուի, հտր. երկրորդ*, 1769, Վենետիկ, տպ. Անտոնի Պոռթոլի): *Սեճճատէ, Սեթճատէ*՝ ազնիւ խալի, օթոց: Սեճտէ՝ երկրպագութիւն բառից է առաջացել, էջ 571-72:

[3] Քիւրտեան, էջ 45:

[4] Վ. Գանցհորն, *Քրիստոնեայ-արեւելեան գորգը, ակունքներից մինչեւ XVIII դարն ընկած պատկերագրական եւ պատկերագիտական զարգացման ուրուագիծ*, Ասողիկ, Երեւան, 2013, էջ 484:

[5] John Kimberly Mumford, *Oriental Rugs*, Charles Scribner's Sons, New York, 1900, էջ 94:

ելեւ-տով դէպի մուսուլմանական աշխարհի հոգեւոր կենտրոն՝ Մեքքա քաղաքն ուղղուած[6]: Մզկիթում այն տեղադրւում է անմիջապէս աղօթախորշի (Qibla) դիմաց՝ ցոյց տալով Մեքքայի ուղղութիւնը, եւ այդ ուղղութեամբ էլ հաւատացեալները պէտք է աղօթեն[7]: Զարդարւում են կրօնական, ծիսական խորհրդանիշերով՝ սանր, ջրի սափոր, որոնք մուսուլմաններին յիշեցնում են, որ պէտք է ձեռքերը լուանալ ու սանրել մօրուքը նախքան աղօթքը սկսելը, իսկ կովկասեան գորգերում երբեմն ձեռքեր են պատկերուած, որ ի ցոյց տրուի որտեղ դնել ձեռքերը: 17-18րդ դարերի աղօթագորգերը (այսօր յայտնի որպէս թուրքական) յաճախ կոչւում են նաեւ տրանսիլվանեան կամ զիբենբուրգեան, քանի որ բազմաթիւ գորգեր պահպանւում են Տրանսիլվանիայի եկեղեցիներում. երկիր, որը երկար ժամանակ գտնուել է Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ[8]:

Աղօթքագորգերը որպէս տեսակ շրջանառւում էին կրօնական խստութիւններով եւ գործառոյթներով, դրանք մեծ տարածք են ընդգրկել եւ հետեւաբար դրսեւորուել են տարբեր ազգերի եւ գորգագործների մատուցած ոճերի բազմազանութեամբ: Աղօթագորգերը հնարաւոր չէ շփոթել այլ գորգերի հետ: Պարսկական գորգերում կամարը աչքի է ընկնում կորագիծ ձեւերով, իսկ կովկասեան ու փոքրասիական գորգագործական կենտրոններում ստեղծուածներում՝ ուղղագիծ, սրածայր: Փոքրասիական աղօթագորգերին բնորոշ է հարթ դաշտը, մինչդեռ կովկասեան եւ թիւրքմէնականներին՝ զարդանախշերով լցուած դաշտը[9]: Չնայած այս աղօթագորգերը մեր օրերում ճանաչում են գտել որպէս մահմեդական կրօնական արարողակարգի մասնիկ՝ նրանց ստեղծման ակունքներում քրիստոնէական մշակոյթն է հիմնաւորուած:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Հայկական բազմադարեայ մշակոյթում հիմնաւորուած կամարագիծը, որն այդչափ առատօրէն իր տեղն է գտել խաչքարերի, եկեղեցու ներքին ու արտաքին յարդարման, շքամուտքերի, վարագոյրների, հանդերձանքի, մանրանկարչութեան մէջ՝ անմասն չէր թողնի նաեւ գորգը: Ըստ ճարտարագէտ Սարգիս Ճեւահիրճեանի՝ Հայաստանի մէջ կամարի գործածութիւնը գոյութիւն ունէր հեթանոսական շրջանում, երբ հայկական մեհեաննե-

---

[6] Dr. G. Griffin Lewis, *The Mystery of the Oriental Rug*, J.B. Lippincott Company, Philadelphia and London,1914, էջ 34:

[7] A. F. Kendrick, *Hand-woven Carpets Oriental and European*, *Vol 1,* Charles Scribner's Sons, New York, 1922, էջ 53:

[8] Dr. Maurice S. Dimand, *Peasant and nomad rugs of Asia*, Asia house gallery, New York, 1961, էջ 16:

[9] Dr. G. Griffin Lewis, *The Practical Book of Oriental Rugs*, printed by J.B Lippincott company at the Washington square press Philadelphia, Philadelphia & London, U.S.A., 1913, էջ 322-23:

ը ծածկուած էին քարաշէն կամարակապ տանիքներով: Արտաքին սիւնաշարերի վրայ հայ վարպետները դնելով աղեղներ, կամարներ, ստեղծում են սիւնազարդ ծածկոցի հայկական կամարակապ դրութիւնը[10]: Յետագայում որմերի կամարակապ սիւնազարդումը անցաւ քրիստոնէական ճարտարապետութեան մէջ: Չնայած որ քրիստոնէական ճարտարապետութեան պահանջները կտրատեցին, ձեւափոխեցին մեհեանները, բայց թողեցին որոշ ձեւեր[11]: Ճարտարապետութեան մէջ կենսահիմք հանդիսացող այս կորագիծը իր գեղարուեստական ազդեցութիւնն ունէր հարեւան այլ ժողովուրդների մշակոյթի վրայ: Այդ փոխազդեցութիւնների զարգացման ընթացքում, բնականաբար օտարները կը դնէին իրենց կնիքը, երանգը, որով, այսպէս ասած, սեփականաշնորհւում է փոխառնութիւնը:

Հայկական ճարտարապետական կամարի ազդեցութիւնը այլ ժողովուրդների արուեստների վրայ նկատել են մի շարք գիտնականներ: Հինգերորդ դարից Հայաստանում սովորական էին պայտաձեւ աղեղները եւ կամարները, եօթերորդ դարում օգտագործւում էին նաեւ ogive (հայկական աղեղախուրձ) կոչուած ձեւերը: Հնագիտական աշխարհի մէջ ընդունուած կարծիք էր պայտաձեւ աղեղները համարել արաբական ոճի ծնունդ: Բայց ֆրանսիացի ճարտարապետ, հնագետ Շարլ Թեքսիէն տեսնելով Տեկորի եկեղեցու կամարները՝ արդարացի կերպով յեղաշրջեց այդ կարծիքը բացատրելով, որ տասներորդ դարում ծաղկող արաբական կարծուած աղեղների նախատիպը Հայաստանի մէջ գոյութիւն ունեցել է դեռ հինգերորդ դարում, հետեւաբար՝ հայերն են այդ ոճը տուել արաբներին[12]: Ճեւահիրճեանը յօդուածաշարքով նաեւ խօսում է գոթական ճարտարապետութեան մէջ հայկական աղեղախուրձերի ազդեցութեան մասին՝ օրինակ ունենալով մի շարք հայկական եկեղեցիների՝ Հռոմոսի, Հաղպատի վանքերի ներքին կամարախուրձերը[13]: Պատմական Հայաստանում հայկական ոճով կառուցուած շէնքերն ու եկեղեցիները վերածուել են մզկիթների (օրինակ՝ Ախլաթում գտնուող թուրքական գերեզմանը եւ Իքի Դուրբէ երկու շէնքերը՝ կառուցած հայկական ոճով) [14]:

---

[10] Ս. Ճեւահիրճեան, «Սիւնազարդ ծածկոցի դրութիւնը եւ կամարակապ զարդասիւները հայկական ճարտարապետութեան մէջ», *Բազմավէպ*, 1-12:1942, էջ 43, 36:

[11] Ս. Ճեւահիրճեան, «Սիւնազարդ ծածկոցի դրութիւնը եւ կամարակապ զարդասիւները հայկական ճարտարապետութեան մէջ», *Բազմավէպ*, 1-6:1943, էջ 19:

[12] Թ. Թօրամանեան, «Հայ ճարտարապետութեան շրջանները», *Անահիտ*, 1-2:1911, Փարիզ, էջ 20, 2:

[13] Ս. Ճեւահիրճեան, «Հայկական կամարը գոթական ոճին մէջ», *Բազմավէպ*, 2-3:1940, էջ 43. նաեւ նոյն՝ 8-12:1940, էջ 173. նաեւ նոյն՝ 1-12:1941, էջ 17:

[14] Գէորգ-Մեսրոպ, «Հայ ճարտարապետութիւնը եւ իր ազդեցութիւնը դրացի ազգերու վրայ», *Հայ գրականութիւն,* 4:1913, էջ 6-7:

Եկեղեցական գորգերի կիրառութեան մասին գոյութիւն ունեցող պատմական սկզբնաղբիւրներից վաղագոյնը վերաբերում է չորրորդ դարին, իսկ ընդհանուր առմամբ՝ աղօթագորգերի մասին տեղեկութիւնները սակաւաթիւ են, չնայած՝ թանգարաններում ու մասնաւոր հաւաքածուներում պահպանուող բազում նմուշների, ինչը փաստում է դրանց գոյութիւնը հայկական արուեստում եւ հայերի ունեցած դերը աղօթագորգերի արտադրութեան գործում: Այս տեսակի գորգերը ծառայում էին «Ամենասրբազնագոյնի» վարագուրման համար, ինչպէս Գանցիորն է նշում: Դա կարող էր լինել հայկական խորանային աւանդատունը, կամ էլ «Սրբութիւն սրբոց»ի Սեղանի խորհրդանոցը՝ նախկինում յաճախ նշուած որպէս տաճարիկ, կամ խորանի տարածքում եղած որմնախորշը, որոնք Ս. Սահակի կանոնագրքի ցուցմունքների համաձայն, ենթակայ էին արժանավայել զարդարման[15]:

Հայկական եկեղեցական ճարտարապետութեան անբաժանելի մաս է դիտւում մկրտութեան աւազանը: Միջնադարեան եկեղեցիներում աւազանները հիմնականում գտնւում էին խորանի աջ կողմում՝ հիւսիսային պատի մէջ տարբեր խորանաձեւ փորուածքներով[16]: Առանձին դէպքերում որոշ օրինակներ - ինչպէս Շինուհայրի Կուսանաց անապատի եկեղեցու մկրտութեան աւազանը[17] - ունեն ուղղանկիւն տեսք, աղեղնանաձեւ խորշով՝ նման գորգի: Հայ Առաքելական Եկեղեցու կարեւոր խորհուրդներից է մկրտութիւնը. այն կրում է հոգեւոր վերածննդի խորհուրդը: Ուստի՝ մկրտութիւնից յետոյ դէպի յաւիտենական կեանք տանող այս դուռ յիշեցնող տարածքը պէտք է զարդարուէր ըստ արժանուոյն: Ենթադրում ենք, որ հայոց մէջ խորանաւոր գորգերը ծածկել են մկրտութեան աւազանը:

Հայկական գորգագործական մշակոյթում խորարանապատկեր գորգի պահպանուած հայատառ յիշատակարանով ամենավաղ օրինակներն են 1202ին գործուած «Եռախորան» եւ Գանձասարի՝ Ներսէս 3րդ կաթողիկոսին վերագրուող 1731ի գորգերը[18]: Չնայած որ Եռախորան գորգի ժամանակաշրջանի առնչութեամբ կան տարակարծութիւններ մասնագէտների մօտ, այդուհանդերձ այս օրինակները լաւագոյն վկայութիւնն են հայ մշակոյթում դրանց հնամենի կիրառութեան շուրջ: Նշենք որ, Հռիփսիմէի յի-

---

[15] Գանցիորն, էջ 479, 484:

[16] Ա. Յարութիւնեան, «Վիմագրական նոր վկայութիւն Մելիք Հայկազ Բ.ի գործունէութիւնից», *Սիոն*, 1-3:2021, Երուսաղէմ, էջ 126:

[17] Նոյն, էջ 132:

[18] Քիւրտեան, էջ 64, 68: Արձանագիր խորանագորգեր հանդիպում ենք նաեւ մասնաւոր հաւաքածուներում (տե՛ս՝ L.Der Manuelian, M. L. Eiland, *Weavers, Merchants and Kings, The Inscribed Rugs of Armenia*, Kimbell Art Museum, 1984, էջ 172, 186):

շատակարանով գորգը հնագոյն արձանագրութեամբ պահպանուած խորանագորգն է[19]:

Քիւրտեանն օգտուելով իր ձեռքի տակ եղած աղբիւրներից, մասնաւորապէս ճանապարհորդ W. K. Stuath 1835ին գրի առած մի վկայութիւնից, նշում է, որ Կարինի հայկական եկեղեցիներից մէկում տղամարդկանց հարուստ խաւը ծնրադրում է եկեղեցու աջ կողմում գտնուող գորգերի վրայ: Հեղինակը նաեւ մէջբերում է Նոր Ջուղայի վաւերաթղթերից, որտեղ խօսւում է եկեղեցական գորգերի մասին: 1721ին Նոր Ջուղայի դիւանից գրուած նամակում՝ ուղղուած Երնջակի Ս. Կարապետ եկեղեցու աթոռակալ վարդապետին, նամակագիրը նշում է ստացուած բազմաթիւ իրերի մէջ նաեւ *«սկու խալիչայ...մէկ քարոզի խալիչայ»*: Հեղինակի կարծիքով քարո-զի գորգը քարոզողի ոտքերի տակ էր փռւում, իսկ սկիհի գորգ՝ սկիհի տակ, խորանի վրայ[20]: Քարոզի գորգի յիշատակութիւնը թոյլ է տալիս են-թադրել, որ այն յատուկ յարդարանքով զանազանուող եկեղեցական գորգ է եղել:

13րդ դարի արաբ պատմագիր ԱլՔիֆտիի պատմագրութեան մէջ տեղ գտած մի երկխօսութիւնում յիշատակուած է 8րդ դարի վերաբերող հայկական մի աղօթագորգ (*նամադ*), որը ներկայացնում էր պարտէզային տեսարան՝ պատկերուած ծաղկուն այգի եւ զբօսանքի դուրս եկած բարձրախաւ տիկնայք[21]: Վաղ շրջանից հայկական արուեստի պահպանուած օրինակներից է 13րդ դարում Կիլիկիայում ծաղկած (1286) Հեթում Բ. թագաւորի Ճաշոցը (ՄՄ 979-6բ), որտեղ մանրանկարիչը Բարսեղ Կեսարացուն պատկերել է սիւնազարդ կամարագորգի մէջ: Այս պատկերը կրում է 13րդ դարի գեղարուեստական մշակոյթի ընկալման ու ընկերային գործառման իւրայատկութիւնը:

19րդ դարում գորգերը մաս են կազմել եկեղեցական արարողակարգերի, պատարագի ժամանակ ժամարարը բեմի առջեւ գորգ է դրել[22]: Երուսաղէմում Ս. Ծննդեան ճրագալոյցի երեկոյեան, ըստ սովորութեան, հայոց պատրիարքը միաբանութեամբ հանդերձ Բեթղեհէմ է գնում, իջնում Ս. Այրը, խաչով, աւետարանով զարդարում, լցնում ամենայն կանթեղով, ջահով, մոմերով եւ արկանում գորգ թէ՛ սուրբ Ծննդեան Տեղի առջեւ եւ թէ՛ Մսուրի մօտ՝ ուխտ ու երկրպագութիւն անելով[23]: 20րդ դարասկզբին Երու-

---

[19] Գանցիորն, էջ 481, 484:

[20] Քիւրտեան, էջ 43-46:

[21] Ա. Պօղոսեան, «Եռախորան գորգի ծագումնաբանութեան հարցի շուրջ», *Էջմիածին*, Զ:2017, էջ 83:

[22] *Կարգացոյց ըստ աւանդութեանց Հայաստանեայց Եկեղեցւոյ*, տպ. Մ. Կ. Սարբեան, Կ. Պոլիս, 1888, էջ 11:

[23] Մկրտիչ վարդապետ Արծրունեան, *Ստորագրութիւն սրբոյ քաղաքին Երուսաղէմի, քննութեամբ համառօտեալ ի Հաննա եւ ի Մարինոս պատմագրաց ընդ որս եւ յաւելեալ բազում բանս հանդերձ կարեւոր ծանօթութեամբք*, տպ. Ս.

սաղէմի Ս. Յակոբ վանքում եկեղեցական արժէքաւոր իրեղէնների, ձեռագործ հնագոյն գորգերի շարքում կային թանկարժէք մետաքսեայ *սեճճապէ*ներ, որոնք դժբախտաբար այրուել են 1911ի հրդեհից[24]:

ՀԱՅԵՐԸ ԽՈՐԱՆԱԳՈՐԳԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՒ ԻՒՐԱՑՈՒՄՆԵՐ

19-20րդ դարասկզբին Արեւմտեան Հայաստանի խոշոր քաղաքների եւ յատկապէս Փոքր Հայքի գորգագործական կենտրոններում տարատեսակ գորգերի կողքին մեծ թիւ են կազմում հիւսուած խորանագորգերը: Աղօթագորգերի արտադրութիւնը ոչ միայն կապուած էր հայ իրականութեան մէջ կիրառելու[25], այլ նաեւ մահմեդականների շրջանում սպառելու, իրացնելու հետ: Եւ քանի որ 19-20րդ դարասկզբին մեծ զարգացում ապրեց գորգի առեւտուրը[26], բնականաբար, գործելու էին գորգեր առաջնորդուելով նաեւ շուկայի պահանջներով: Հետեւաբար, սա պատճառ էր նաեւ որ հայ կանանց ձեռամբ հիւսուած գորգերի զարդարման մէջ օգտագործուէին հարեւան ժողովուրդների մշակութային զարդատարրեր: Կեսարիայում, որտեղ ընդարձակ գործի վերածուեց այս արհեստը, հայ վաճառականների շնորհիւ գորգերը դուրս էին բերւում մեծ քաղաքների՝ Կ. Պոլսի, Եգիպտոսի, եւ Իզմիրի հրապարակներ վաճառքի[27]: Այստեղ արտադրուող ճաշակաւոր գորգերի մէջ աչքի են ընկնում յատկապէս *սեճճապէ*ները, որոնք, փաստօրէն, աւելի նուրբ ու կենդանի գոյներով էին քան պարսկական գորգերը[28]: Կեսարիան մետաքսեայ գորգերի արտադրութեան կենտրոնն էր Թուրքիայում. *«Մեծամասամբ այստեղ աղօթա-*

Յակովբեանց, Երուսաղէմ, 1859, էջ 236. նաեւ՝ *Բովանդակութիւն ազգային սեպհականութեանց ընկերովի իրաւանց արարողութեանց եւ սովորութեանց ի տնօրինական Ս. Տեղիս*, տպ. Ս. Յակովբեանց, Երուսաղէմ, 1890, էջ 121:

[24] Յ. սարկաւագ Մանաւեան, «Երուսաղէմին վանքին հրդեհը», *Բիւզանդիոն*, Կ. Պոլիս, 1911, 4441, էջ 1:

[25] Յունահայ համայնքում պահպանուել է Պլեճեան ընտանիքին պատկանող սիւնազարդ մի խորանագորգ, որը ժամանակին Սեբաստիայում առանձին սենեակում է իր տեղն ունեցել, որտեղ առանձնացել են աղօթելու համար (Պլէճեան Հաւաքածոյ-Սելանիկ https://www.houshamadyan.org/arm/oda/europa/blejian-coll.html):

[26] Այս երեւոյթը պամանատրուած էր եւրոպական երկրներում եւ ԱՄՆում ձեռագործ գորգերի պահանջարկի կտրուկ աճով (Ա. Պողոսեան, «Գորգագործութիւնը Փոքր Ասիայում (XIX դ. երկ. կէս, XX դ. առ. քառորդ)», *Հայ ժողովրդական մշակոյթ XVI, աւանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում, Դերենիկ Վարդումեանի ծննդեան 90 ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածու*, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատ., Երեւան, 2014, էջ 102:

[27] Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր*, Hagob Papazian press, Գահիրէ, 1937, էջ 1501-7:

[28] Յ.Պ.Թ., «Կեսարացիք եւ գորգաշինութիւնը», *Բիւզանդիոն*, 1899, թիւ 707, էջ 1:

գորգեր են գործում, հարթ, միագոյն կենտրոնով, եւ այդ գորգերի վաճառքով, ընդհանուր առմամբ, զբաղում են հայերը»[29]:

Փոքր Ասիայի յայտնի գորգագործական կետրոններում՝ Գիորդէսում (Ghiordes), Լադիկում, Ուշակում[30], Պերգամա[31] գործուած աղօթագորգերը մասնագիտական գրականութեան մէջ յայտնի են այդ քաղաքների անուններով: Նշուած տարածքներում ամէն տուն ունեցել է իր դազգահը: Շատ տեղերում գործարանները հիմնուել են եւրոպական եւ ամերիկեան կապիտալիստների կողմից, գորգագործները գրեթէ բոլորը հայ կանայք ու աղջիկներ են եղել: Ըստ օտար հեղինակների հաղորդումների՝ մուսուլման կանայք չպէտք է աշխատէին գործարաններում[32]: Գորգագէտ Է. Միւրէյը նկատում է, որ Թուրքիան զրկուեց իր հմուտ գորգագործներից, երբ հայերը լքեցին Թուրքիան, նշելով, որ վերջիններս միշտ գործել են եւ հաւանական է համարում անատոլիական գորգերի մեծ մասը գործուել են հայերի եւ յոյների կողմից[33]: Իսկ ամերիկացի միսիոնարները նշում են, որ Թուրքիայում արտադրուած գորգերի մեծ մասը պատրաստել են հայ, յոյն կանայք, իսկ թուրք կանայք գրեթէ համընդհանուր հրաժարուել դրանք գործելուց[34]: *««Թիւրքական» գորգ ասուածն իր մէջ ներառում է բոլոր գորգերը, որոնք արտադրուել են Օսմանեան կայսրութեան ներսում, արտադրողները կարող էին լինել քրդեր, չերքէզներ կամ քրիստոնեաներ, վերջիններս՝ հայերը, յոյներն էին»*[35]: Մէկ այլ աղբիւր նշում է. «*Թուրքական կայսրութիւնում գորգերի առեւտուրը հայերի, յոյների ու հրեաների ձեռքում է, գեղազարդումը, որը մի ժամանակ ասորական, բաբելոնեան էր, հիմա՝ արաբական, օսմանեան»*[36]:

Թուրքիայի մզկիթները զարդարող հայկական գորգերի մասին տեղեկութիւն է թողել 1912-18ին Պոլսի Էւքաֆի թանգարանի վարչական խորհրդի անդամ Արմենակ Սագըզեանը: Նա գրում է որ թանգարանը մահմե-

---

[29] Eliza Dunn, *Rugs in their Native Land*, Dodd, Mead and company, New York, 1916, էջ 80-81:

[30] Այս քաղաքների գորգերի եւ դրանց առեւտրի մասին տե՛ս՝ Գ. Հալէպեան, «Ուշագի, Քէօթահիայի, Սիմաւի, Կէօրտէսի գորգերը», *Բիւրակն*, 1907 թիւ 28, էջ 1076:

[31] «Պերկամա տեսակի փոքրագորգերը (սեթճատէ) այնչափ յարգի չըլլալով արժէքը չնչին է, բայց այս ապրանքի մեծ տեսակները սենեակի գետնի մերկութիւնն են գոցում, պայմանով, որ զոյգ լինեն» (Ա.Ն. Գաբուճեան, «Հնամեայ գորգերը եւ անոնց արժէքը», *Մանզումէի Էֆքեար*, 1905 (1325) էջ 1:

[32] Lewis, *The Practical*, էջ 217:

[33] E. Murray, *Oriental Rugs*, USA, 1976, էջ 106:

[34] "Woman's Work in Foreign Lands," *Mission Studies*, 6(XXII):1904, էջ 181:

[35] Rosa Belle Holt, *Rugs, Oriental and Occidental Antique and Modern*, A. C. McClurg & Co, Chicago,1901, էջ 52:

[36] C. R. Clifford, *Rugs of the Orient*, Glifford & Lawton, New York, 1911, էջ 59:

դական կրօնական հաստատութիւնների հին գորգերը ստանալու համար դիմել է երկու հայկական կենտրոնների՝ Էրզրում եւ Վան: Կարինից ստացած գորգերի մէջ եղել են խաչապատկեր հայական գորգեր[37]: Հայկական գորգերը եկեղեցիներից վերցնում եւ իւրացնում էին օտարները, այդպիսին էր նաեւ արձանագրութեամբ յայտնի Գոհար գորգի (Արցախ, 1700) ճակատագիրը, որն ինչպէս օտար հեղինակներն են նշում թուրքերն են վերցրել հայկական եկեղեցուց, ապա եւ Սեւ ծովով տարուել է Լոնդոն[38]: Եկեղեցական իրերի կողոպուտը յայտնի էր աւելի վաղ արաբական շրջանից: Ըստ Յովհաննէս Դրասխանակերտցու մի վկայութեան՝ արաբները Ը. դարում կողոպտում են եկեղեցական սպասքի հետ նաեւ արկանելին (գորգ) եւ առագաստը (խորանի վարագոյր) (Բագուանայ գիւղի Ս. Գրիգոր վանք) [39]:

Այս վկայութիւնները կարեւոր աղբիւրներ են, որոնք ապացուցում են հայերի ունեցած մեծ աւանդը օսմանեան շրջանում գործուած գորգերի գործում: Մեզ ժառանգել են արուեստի գործեր, որոնցում դրոշմուած են իրենց աշխարհընկալումը, փիլիսոփայական ու գեղագիտական հայեացքները: Այս գորգերի ձեւերի զինանոցը հայ մշակոյթն է, որում վերամշակուած են կեցութեան բոլոր պատկերացումները մարդկութեան փորձով եւ այդ մշակութային ձեւերի կիրառումը, մշակումը, նոր բնագաւառ փոխադրելով այս ազգային առանձնայատկութիւնները միասնական հանգոյցով կապուել են հոգեւոր ու նիւթական մշակոյթին եւ նորարական մեծարդիւնք փոխակերպումներ հաղորդել գորգարուեստին:

ԱՂՕԹԱԳՈՐԳԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԿԱՄԱՐԱՁԵՒԵՐԻ. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՐԴԱՐԱՆՔԸ

Հայոց ազգագրութեան թանգարանում պահպանւում են մօտ երեք տասնեակ (29) խորանաւոր աղօթագորգ (հաշուի մէջ չեն մտնում սիւնազարդ գորգերը, որոնց անդրադարձել ենք[40]): Հաւաքածուի նմուշները ունեն ճարտարապետական կամարների տարբեր լուծումներ: Ըստ կամարների փորձել ենք տարբերակել՝ ***գմբէթաձեւ, կիսագմբէթ, ուղղանկիւն գլխազարդ, ասպիճանաձեւ եւ կորաշար-աղեղնաձեւ*** կողերով տեսակ-

---

[37] Ա. Սագըզեան, «Հայկական գորգերը ԺԵ.էն ԺԹ. դար», *Անահիտ*, 5-6:1932, էջ 74:

[38] A. F. Kendrick, *Hand-woven Carpets Oriental and European*, New York, 1922, էջ 16:

[39] Յ. Քիւրտեան, «Հայ եւ արաբ գեղարուեստի յարաբերութիւնը», *Անահիտ*, 1-2:1932, էջ 60:

[40] Ա. Մխիթարեան, «Հայոց ազգագրութեան թանգարանի խորանաւոր գորգերը», *Հայկական հանգոյց, հայոց գորգագործական մշակոյթը, հանրապետական երկրորդ գիտաժողով*, «Նոր տպագրիչ» ՍՊԸ, Երեւան, 2016, էջ 53:

ներ, իսկ որպէս առանձին տեսակ ենք համարել ձեռնապատկեր գորգերը:

Գմբէթաձեւ գլխազարդով գորգերը պահանջմունքին համապատասխան ճարտարապետութեան ու գեղագիտական բովանդակալից ձեւերի միասնութիւն ունեն: Առանձնանում են ուղղանկիւն դաշտի վրայ սրածայր գմբէթի պատկերագրութեամբ, որի ճակատամասի պատկերային ձեւն ունի հայկական եկեղեցու սուրանկիւն գմբէթի տեսք: Փոքրասիական աղօթագորգերն աչքի են ընկնում գմբէթաձեւ վերջաւորութեամբ ու չնայած այսօր ներկայացւում են որպէս թիւրքական, այդուհանդերձ հայկական պաշտամունքային ճարտարապետութեան ազդեցութիւնն ու դրոշմն են կրում: Գմբէթն այստեղ ամբողջ դաշտի երկայնքով է կամ՝ պահպանւում է միայն վերին գօտեզարդ խորանի հատուածը՝ նեղ գօտու տեսքով: Վերջինս կարող է լցուած լինել խաչապատկերներով (Հմր3549, 3592, 3776), շերտագծերով (Հմր1254), քառաթերթ ծաղիկներով (Հմր5343, 6970): Իսկ կենտրոնական դաշտում տեղ են գտնում տարբեր գորգատեսակներին բնորոշ զարդայօրինուածքներ, երկրաչափական ու բուսական զարդանախշեր: Հանդիպում ենք գորգեր, որտեղ կողք կողքի ներկայացւում են զոյգ գմբէթներ (ընդունուած է համարել, որ բազմախորշ գորգերը նախատեսուած էին - նախանշում էին աղօթողի տեղը - ընտանիքի համար)[41]: ՀԱԹ **Հմր3549** (19րդ դարի կէս) օրինակում գորգը զարդագօտով բաժանուած է երկու մասի, որոնց վրայ առանձին պատկերուած է զոյգ գմբէթախորշ:

Ոճաւորուած բուսական զարդարանք ունի ՀԱԹ **Հմր3592** *(Շիրվան, 19րդ դարի կէս)* գորգը, որի ողջ հիմնադաշտը կենաց ծառերով է պատկերուած: Վերջիններս ամփոփուած են խաչապատկերներով հատուող ցանցի մէջ: Խաչերով են լցուած նաեւ ոճաւորուած ծառերի կենտրոնները, գորգի արտաքին ու ներքին եզրագօտիներից մէկը, ինչպէս նաեւ գմբէթի գօտին: Բուսածաղկային ոճաւորմամբ մեծ խաչ է հիւսուած ՀԱԹ **Հմր 6970** *(Խարբերդ, 19րդ դարի առաջին կէս)* (**նկ. 1**) գորգի դաշտի կենտրոնում: Իսկ խորանը ձեւաւորուած է խաչահիմք ութաթերթ ծաղիկներից կազմուած շղթայով:

Սիւնազարդ խորանագորգերի պատկերագրութեան մնացուկ է պահպանուել ՀԱԹ **Հմր 3776** (20րդ դարի սկիզբ, Շիրվան) գորգի դաշտում: Գմբէթաձեւ կամարի տակ տեղ է գտել կանթեղի կամ սափորի ուրուագիծ ունեցող յօրինուածք, որը նաեւ կրկնւում է կենտրոնում զիգզագաձեւ ելուստ ունեցող նախշերի մէջ: Կախուած կանթեղով պատկերումը տարածուած էր Փոքր Հայքի գորգերում, յաճախ է հանդիպում Գիորդէս եւ հազուադէպ՝ Kulah գորգերում[42]:

---

[41] Lewis, *The Mystery*, էջ 36:

[42] Lewis, *The Practical*, էջ 323:

Կիսագմբէթ գորգերն ի համեմատ նախորդ օրինակների տարբերւում են կամարի կառուցուածքով սուր անկիւնը գագաթամասում հատուած, կտրուած է ուղիղ գծով: Կորնթարդ այս կամարները նոյպէս նեղ գօտու տեսքով են: Խնձորեսկ տիպի վիշապագորգի զարդայօրինուածքով է յարդարուած ՀԱԹ **Հմր 1158.3** *(Սիւնիք, 20րդ դարի սկիզբ)* գորգը: Հատած գմբէթի աջ եւ ձախ անկիւններում խաչապատկերներ են, իսկ կենտրոնական դաշտն ընդգրկում է խնձորեսկ գորգերին յատուկ մեդալիոն: Բուսաձաղկային լուծումներ են կրում ՀԱԹ **Հմր 3484** *(Վան, 20րդ դարասկիզբ)* (**նկ. 2**) եւ **Հմր3598** *(1894, Շիրվան-Ղուբա)* գորգերը: Ոճական սերտ ընդհանրութիւններ ունեն եւ հաւանաբար նոյն տարածաշրջանում են գործուել 3598 եւ վերոնշեալ 3592 համարի գորգերը: Այն արտայայտւում է ողջ դաշտի մակերեսում ոճաւորուած կենաց ծառերով եւ եզրագօտիների նոյն զարդային լուծումներով, տարբերութիւնը գմբէթների ձեւաւորման մէջ է: 3598 գորգի գմբէթարդը լայն է ու վերեւում հատած, նոյնպէս լցուած է խաչերով, ունի արաբատառ թուագիր արձանագրութիւն (1894): Խաչերով է յարդարուած նաեւ 3484 գորգի գմբէթի գօտին, իսկ դաշտի գոյն ընդգրկող մակերեսի վրայ կողք կողքի դասաւորուած ծաղկանախշեր են:

Կենաց ծառերի պատկերումը ոչ միայն տեղ է գտնում հիմնական դաշտի վրայ, այլ որոշ օրինակներում այն գորգի վերին անկիւններում է՝ գմբէթի աջ եւ ձախ կողքերին: Այս ձեւով են յարդարուած այս խմբի ՀԱԹ **Հմր1292** *(Կ.Պոլիս, 19րդ դար)* եւ **Հմր68-1** *(Գանձակ, 1921)* եւ *ուղղանկիւնաձեւ* գլխազարդով Հմր3559 գորգերը: 1292 կենաց ծառն ունի եղեւնաձեւ տեսք, որի գագաթն աւարտւում է շեղանկիւն նախշով, իսկ 68-1 եւ 3559 օրինակներում դրանց ճիւղերը կեռանախշերով են ձեւաւորուած: Կենաց ծառերի պատկերումն իր մէջ ամփոփում է յաւերժութեան գաղափարը: Այդ մասին՝ ստորեւ: 1292 եւ 68-1 գորգերը զարդարուած են երկրաչափական զարդանախշերով, 68-1 գորգի գմբէթի ներսում արաբատառ թուագիր արձանագրութիւն է՝ 1921: Ոճական ընդհանրութիւններ ունեն 68-1 եւ **ՀԱԹ Հմր7638** *(Վայոց ձոր, 19րդ դար, արաբատառ արձանագրութիւն՝ 1844)* եւ գմբէթաձեւ գլխազարդով **Հմր1254** *(Եղէգնաձոր, 20րդ դար)* համարի գորգերը: Սրանց բնորոշ է դաշտի վրայ ելուստաւոր ուղղանկեան պատկերների դասաւորուածութիւնը:

Այս գորգերի եւ, առհասարակ, աղօթագորգերին բնորոշ զարդայօրինուածքային առանձնայատկութիւններից է գմբէթի ներսում, կամ շուրջը տեղաւորուած սանրի պատկերները՝ որպէս յիշեցում մահմեդականներին մօրուքը սանրելու[43]: Սակայն նկատենք, որ նման սանրաձեւ կամ կտուտիչ յիշեցնող զարդանախշ յաճախ ենք հանդիպում հայկական կարպետներում ու գորգերում: Դրանք հանդէս են գալիս տարբեր ձեւերով՝ ուղղանկիւն, ուղղանկիւն սեղանաձեւ՝ ատամնաշարով: Որոշ օրինակներում՝ 68/1,

[43] Lewis, *The Mystery*, էջ 38:

1292 անմիջապէս խորանի տակ պատկերուում են խոշոր չափի եւ ուղղանկիւն սեղանի տեսք ունեն, հաւանաբար սա ոչ թէ սանր է, այլ՝ եկեղեցու խորանի հարթակ: Նախորդ խմբի՝ 3776 համարում երկու ձեւն էլ պատկերուած է: Որոշ օրինակներում նրա անմիջապէս վերեւում փոքրիկ գորգ յիշեցնող պատկերներ են, ինչը եւս խօսում է սեղանի ու նրա վրայ փռուող գորգ, կամ ծածկոցի մասին: Այսպէս, 68/1 գորգում, այն աւելի յստակ է պատկերուած, փոքրիկ գորգիկ է՝ կենտրոնական դաշտով, եզրագօտով, փորձ է արուած զարդանախշեր տալ՝ քառակուսի հանգոյցներին տարբեր երանգներ հաղորդելով: 1292 գորգում զուգահեռ երկու հորիզոնական զարդաշերտեր են, իսկ 7638 համարում քառակուսի շրջանակ է՝ եզրագօտով եւ կենտրոնի շեղանկիւնաձեւ զարդանախշով: 1254 համարում գմբէթի կողմնային հատուածներում երկու միանման շախմատի դասաւորութեամբ գորգիկներ են:

Խորանաւոր գորգերը համադրութեան մէջ են հայ մանրանկարչութեան հետ եւ նրա հիմքի վրայ են ձեւաւորւում: Ոճական իւրատեսակութիւն ունեն, կցւում են կենցաղային տարրեր՝ սափոր՝ բնորոշ դարձնելով զարդարանքի ու կառուցուածքի զուգակցումը: Սափորի պատկերագրութիւնը հանդիպում է հայկական ձեռագրերում վաղ շրջանից՝ Աւետման, Ոտնլուայի տեսարաններում, լուսանցազարդերում: ՀԱԹ **Հ^{մր} 7501** *(1901-2)* (**նկ. 3**) գորգի վերին գմբէթի աջ ու ձախ անկիւններում են պատկերուած: Գմբէթի տակ արաբատառ թուագիր արձանագրութիւն է՝ (1901-2):

Խաչքարի լուծումներ են տրուած ՀԱԹ **Հ^{մր} 7258** *(20րդ դարի սկիզբ)* գորգին. կենտրոնական դաշտի ուղղանկիւն զարդայօրինուածքի մէջ խոշոր խաչ է, որից ներքեւ վարդեակ է, ինչպէս խաչքարերում: Հաւանաբար գորգը նախօրինակ է ծառայել աւելի ուշ գործուած 5294 գորգին:

Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում ***կիսագմբէթ*** տեսակի գորգերը, որոնք մօտ են այսպէս կոչուած *«Բելլինի»* տիպին: Սրանք նոյն ճակատամասով են, տարբերութեամբ, որ Բելլինի տիպում Գանցիորնը օրինակներ է բերում ստորին հատուածում բացուածքով կամ բանալու անցքի նմանուող յօրինուածքով: Մեր օրինակներում ստորին հատուածն ունի դէպի գորգադաշտ ուղղուած բացուածք՝ մուտք յիշեցնող նախադուռ, որը կարող է լինել փակ կամ բաց: Հեղինակը «բանալու անցքը» ենթադրում է որպէս մկրտութեան աւազան, որը յետագայում դառնում է «Սուրբ տարածքի» մուտք[44]: Մեր օրինակներում դրանք յիշեցնում են եկեղեցու յատակագիծ՝ ճակատամասի խորանով եւ ստորին մուտքով: ՀԱԹ **Հ^{մր} 455/5,** *(Կարս, 19րդ դարի վերջ),* **Հ^{մր} 5343,** *(20րդ դարասկիզբ),* **Հ^{մր}6777** *(Ախալցխա, 19րդ դարի վերջ)* գորգերի կամարախորշերի ստորին հատուածները ներձգուած են՝ մուտք յիշեցնող, տարբերւում են ճակատամասի կամարների ձեւերով: 455/5 օրինակում կամարը հատած գմբէթի ձեւ ունի,

[44] Գանցիորն, էջ 504:

5343 սուրանկիւն գմբէթաձեւ է, կողքերին՝ արաբատառ արձանագրութիւն՝ *«Ալլահ»*, այս երկու օրինակներում էլ հիմնական դաշտը զարդարում են խոշոր խաչաստղի կամ Որոտան գորգերի զարդայօրինուածքները՝ ութաթեւ աստղերը: Տարբերուող օրինակ է 6777 գորգը, որի ճակատամասը բոլորովին նման չէ միւս օրինակներին. գորգագործուհին ներշնչուելով վահանագորգերից, այն հետաքրքիր ոճով ներկայացրել է կամարի հատուածը այն նմանեցնելով մարդու գլխի՝ շնորհիւ ներսում օգտագործուած զարդանախաշերի, որոնք դիմագիծ են յիշեցնում: Ամենայն հաւանականութեամբ նախնական օրինակները եղել են բանալու անցքով, այնուհետեւ հանդէս են եկել տարբեր լուծումներով, ինչպէս՝ մեր օրինակներում: Պատահում են գորգեր, որ հանդէս են գալիս ներքեւի փակ եզրով՝ **ՀԱԹ Հմր6769** (Ախալցխա, 1899), որն ունի արաբատառ գրութիւն:

Գեղարուեստական առանձնայատուկ յարդարում ունեն այս շարքի ՀԱԹ **Հմր 3884/1** *(Խարբերդ-Բալու, 19րդ դար)* (**նկ. 4**) եւ **Հմր 7658** (20րդ դարի սկիզբ) գորգերը. հաւանաբար նոյն վարպետի աշխատանք են[45]: Գորգերի կարմիր հիմնագոյնի վրայ տեղ են գտել գմբէթաձեւ կամարով, ներքեւի ստորին եզրի բաց դռան մուտքով խորշեր: Կամարը լայն գօտու տեսքով է, որը երկու օրինակում էլ զարդարուած է նոյն կեռազարդ ատամնանախշով, վերջիններս մուտքի երկու եզրագծում աւարտւում են ծառ յիշեցնող բուսանախշով: Յատուկ նշանակութիւն ունի պատկերամոտիւային իմաստաբանութիւնը: Հիմնադաշտը, որն այստեղ, ըստ էութեան, սուրբ տարածք է ընկալւում, տեղ են գտել պաշտամունքային ճարտարապետական կառոյցներ, ամենայն հաւանականութեամբ սուրբ շինութիւններ՝ նման եկեղեցու, քանի որ կտուրներին խաչի պատկերներ են: Սրանք տեղաւորուած են անմիջապէս կամարի տակ մէկական օրինակով եւ դաշտի վրայ, պատկերուած են եռաշերտ ֆասադով՝ լցուած **S**-աձեւ վիշապ նախշերով եւ կտուրով՝ աւարտուող փոքրիկ ու մեծ խաչերով: Շինութիւնները շրջապատուած են ծառերով[46], որոնք 7658 գորգում պատկերուած

---

[45] Այս գորգերը գրականութեան մէջ յայտնի են որպէս Քըրշեհիր (Kir Shehr) աղօթագորգ, անունը ձեռք են բերել Անկարայի վիլայէթում գտնուող Քըրշեհիր տեղանունից (Lewis, *The Practical*, էջ 220):

[46] Հոգեւոր եւ աշխարհիկ համակարգերում կեանքի ծառը շեշտում է կեանքի վերընթաց գիծը՝ ծննդից մինչեւ պտղաբերում: Նրա բարձրագոյն նպատակը յաւերժական կեանքն է՝ անմահութիւնը: Ծառը նաեւ իր մէջ կրում է կորուսեալ դրախտի իմաստը, այն ինչը կորցրեցին Ադամն ու Եւան՝ ճաշակելով դրախտի ծառի պտուղը: Եսայի մարգարէն ծաղկած գաւազանի մասին յիշատակում է. «Հեսսէի արմատից գաւազան պիտի ընձիւղուի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից: Նրա վրայ պիտի իջնի Աստծոյ Հոգին, իմաստութեան եւ հանճարի Հոգին» (Եսայի 11:1-2), քանի որ Հեսսէն Դաւիթ մարգարէի հայրն էր, եւ Քրիստոսը Դաւթի թագաւորական ցեղից էր (http://www.surbzoravor.am/post/view/avetman-patkeri-khorhurdy):

են յստակ ուրուագծով, անգամ նշմարւում են նաեւ բարդու պատկերներ, իսկ 3884/1 գորգում դրանք ոճաւորուած են, երկրաչափականացուած[47]: Սրբազան կառոյցների պատկերումը բնականաբար ստեղծւում էր կրօնական-գաղափարական միջավայրում, ունենալով պաշտպանական նշանակութիւն: Ծառի պատկերումը պարտադիր էր թաղման ծէսի համար նախատեսուած գորգերում: Վերջիններս դագաղը ծածկելու համար էին, միշտ ունենում են ծառի պատկեր, կենտրոնում՝ մեծ կամ դաշտը ծածկող փոքր բազմաթիւ ծառեր: Սովորաբար ամենաշատ պատկերուող ծառը նոճին է, որը եւ տնկում են արեւմտահայ (ապա նաեւ սփիւռքահայ) թէ թիւրքական գերեզմանոցներում: Նոճին կրում է յաւերժութեան խորհրդանիշը[48]: Սգոյ յատուկ խորհրդանիշերի, ծառի պատկերումը, թէ՛ ազգային, թէ՛ անձնական նշանակութիւն ունեն: Աղօթագորգերում զրադաշտական նոճու, հնդկական լոտուս ծաղկի, չինական բուդդայական խորհրդանիշերը վկայում են հաւատքների խառնուելու մասին[49]:

Ասպիճանաձեւ կողերով ձեւաւորուած կամարով է առանձնանում յաջորդ խումբը: Աստիճանների սիմետրիկութիւնը երբեմն կարող է խախտուել գծերի թեքութեան հաշուին: Սովորաբար այս տեսակը բաւականին տարածուած է Փոքր Հայքի քաղաքներում: Կամարը երկու կողմերում սկսւում է զիկկուրատներով եւ գագաթում ձգւում-ստանում սուրանկիւն գմբէթի տեսք, աւարտւում է տարբեր զարդաձեւերով: ՀԱԹ **Հմր 455.2** *(Սեբաստիա, 19րդ դարի սկիզբ)* գագաթը շեղանկիւն ելուստով է: Կենտրոնական դաշտն աչքի է ընկնում ութաթեւ աստղերի զարդարմամբ, եզրագօտու խաչահիմք կեռանախշերի ձեւաւորմամբ: Կեռանախշ ելուստով է աւարտւում **ՀԱԹ Հմր 4026.2** *(Խարբերդ, Օւաջըկ, 20րդ դարի սկիզբ)* (**նկ. 5**) գորգը, որի կենտրոնական դաշտը ազատուած է յարդարանքից: Անկանոն կողային կտրուածքներ ունի ՀԱԹ **Հմր 3612** *(1916)* (**նկ. 6**) գորգը, որի գագաթն աւարտւում է փոքրիկ շեղանկիւնով, ուր ամփոփուած է խաչ: Ի տարբերութիւն միւս օրինակների գորգի լայնակի երկու կողմերում են կամարախորշեր պատկերուած: Վերջինիս նախօրինակ են ծառայել սիւնազարդ, կանթեղազարդ գորգերը: Խորշերից կախուած են երկու խոշոր, շղթայակապ կանթեղներ՝ յարդարուած խաչապատկերներով: Ունի հայատառ արձանագրութիւն, վերին ձախ անկիւնում թուագիր՝ 1916, իսկ ստորին լայնակի եզրում հայերէն գրութիւն է՝ ***«1816 (1916) թ(վ)ին Ջաւա Ի-***

---

[47] Ծառերի եւ խաչագմբէթ շինութիւնների պատկերագրութիւնը տարածուած է հայկական գործուածքի գեղազարդման համակարգում. դրանք տարածուած են Ուրֆայի ասեղնագործ, Վանի «Հացալնըխ» կոչուող ծածկոցներում, ինչպէս նաեւ սրբիչներում: Ծառեր հանդիպում ենք նաեւ Սասունի կանանց գոգնոցներում, եկեղեցու գմբէթ՝ Բարձր Հայքի տարազի մետաքսեայ գօտիներում:

[48] Dunn, էջ 79:

[49] Churchill Ripley, էջ 16, 19:

սախանօվ այս խալին անունն տէրա(մ)բ», այսինքն՝ անուամբ Տիրոջ, Տիրոջ կամօք գործուեց:

Ուղղանկիւնաձեւ գլխազարդով օրինակ է **ՀԱԹ Հմ3559** *(Շիրվան-Ղուբա, 20րդ դ. սկիզբ)* գորգը, զարդարուած կեռանախշերով: Ուղղանկիւն գլխազարդը յայտնի է որպէս կովկասեան ձեւ՝ kazak: Գօտին լցուած է խաչերով, երկու կողքերին ոճաւորուած կեռազարդ կենաց ծառեր են: Գմբէթի տակ ամփոփուած է ուղղանկիւն սեղանաձեւ սանր կամ հարթակ, վերեւում՝ երկու զուգահեռ գծեր:

Չնայած որ աղօթագորգերի գեղազարդման համակարգը ներյատուկ գեղարուեստական մոտիւներով է ձեւաւորուած՝ ենթարկուած կրօնականին, այդուհանդերձ, հանդիպում ենք գորգերի, որտեղ պատկերուած են համակարգուած բոլոր զարդատարրերը, բայց չափերով համեմատաբար մեծ են, իսկ աղօթագորգերի բնորոշ յատկանիշերից է փոքրաչափ լինելը[50]: Ըստ էութեան, գորգագործները փոխել են գեղարուեստական արտադրանքի կառուցուածքը եկեղեցական կիրառումից շեղելով՝ իրենց անձնական ծառայութեան համար: Երկու գաղափարները ձուլուած են մէկում, նորը ներկայացնում են որպէս հնի առանձին փոխակերպում: Այդպիսի օրինակ է ՀԱԹ **Հմ7193** *(Արցախ, 1912)* գորգը. կենտրոնում այն խոշոր խաչահիմք զարդաշրջանակ ունի, որի վերին ու ներքին թեւերից դէպի գորգի լայնակի կողերը ձգւում են սրածայր գմբէթներ, որոնք իրենց մէջ ամփոփում են սանր, զոյգ ձեռքեր[51] եւ սափոր: Գմբէթների շուրջը կենաց ծառեր են, դաշտը լի է խաչերով: Ունի հայատառ արձանագրութիւն՝ **«1912 վկ . ոտ»**:

ՀԱԹ Հմ7489 (Արցախ, 19րդ դարի վերջ) (**նկ. 7**) գորգի պատկերները ցուցում են ոչ միայն ձեռքի, այլեւ գլուխը խոնարհելու տեղը: Դաշտի վրայ երկրաչափական զարդայօրինուածքներ են, վերեւում վերածւում են գլխի ուրուագիծ ունեցող զարդաձեւի՝ կողքերին ձեռքեր (նմանօրինակ լուծում ունէր 6777 գորգը): Յատկանշական է, այն իր մէջ ամփոփում է խաչապատկեր փոքրիկ գորգիկ՝ եզերուած զարդագօտիներով: Գորգից վար պատկերւում է սանր: Եթէ գորգիկը յիշեցնում էր, որ աղօթողը չմոռանար իր գորգը, ինչպէս միւս պարագաները, ապա ինչո՞վ էր պայմանաւորուած խաչապատկերների այդչափ առատութիւնը մի տեսակ գորգերի գեղազարդման համակարգում, որը նախատեսուած չէր քրիստոնեայ հայերի համար: Խորհրդաբանութիւնը այն հիմնական բանալին է, որով հնարաւոր է ճշտօրէն ընկալել գորգագործի աշխատանքը: Գրեթէ բոլոր օրինակներում խաչի պատկերներ կան, որոնք, ըստ էութեան, քրիստոնեայի ձեռ-

---

[50] Լայնութիւնը տատանւում էր 76-121սմ, իսկ երկարութիւնը՝ 121-182սմ (Mumford, էջ 94):

[51] Որոշ հեղինակներ ձեռքերի պատկերները նոյնացնում են Մուհամէդի ձեռքերի հետ (Holt, էջ 93):

քի աշխատանք են: Ինչպէս օտարներն են նկատում՝ *«Թուրքերը երբեք չեն զարդարել իրենց գորգերը խաչով, այն հայկական է»*[52]: *«Հայերը թիւրքմենական բոխարա թեքէ (Tekke Bokhara) աղօթագորգերն անուանում են խաչլի բոխարա (Khatchli) նրա համար, որ կենտրոնի զարդագործները չորս մասի էին բաժանում դաշտին խաչի տեսք տալով, իսկ խաչլին հայկական խաչ բառից էր ծագում»*[53]: Եթէ նախորդ օրինակում խորանին փոխարինում է գլխի տեղը մատնանշող յօրինուածը, ինչը յուշում է գորգի գործառոյթի մասին, ապա ՀԱԹ **Հ^{մր}5824** գորգում (Իգդիր, Կաղզուան, 1910) բացակայում է կամարը. միայն ձեռքերի պատկերներ են պահպանուել դաշտի մէջ, դասաւորուած դիմահայեաց: Սա եւս հաստատում է այն տեսակէտը, որ այն բուն գործածութեան նպատակից դուրս է մղուել ու անձնական կիրառութեան համար օգտագործուել՝ պահպանելով որոշ տարրեր: Ունի արաբատառ արձանագրութիւն՝ 1910:

Հաւաքածուում պահպանւում են նաեւ պարսկական աղօթագորգեր, որոնց կամարը յստակօրէն տարբերւում է ոճով, այն ***կորաշար-աղեղնաձեւ*** է: ՀԱԹ **Հ^{մր}7517** (Թաւրիզ, 17-18րդ դարեր) եւ **Հ^{մր}7241** (Թաւրիզ, 19րդ դար) գորգերի գեղարուեստական կառուցուածքը բնորոշ է արեւելեան ոճին, առատօրէն օգտագործուած են բուսաձաղկային մոտիւներ[54]: *«Պարսկաստանում, գլխաւորապէս Սպահանում երկու դար առաջ պատրաստում էին փոքրիկ ասեղնագործ աղօթքի գորգեր: Այս աղօթագորգերից իւրաքանչիւրի վրայ, ծայրին մօտ ասեղնագործուած փոքրիկ նշան կար, որ ցոյց էր տալիս Մեքքայից բերուած սրբազան հողակտորը դնելու տեղը: Համաձայն Ղուրանում տեղ գտած օրէնքի՝ գլուխը պէտք է խոնարհել աղօթագորգի վրայ, այն դիպչում էր ճակատին, երբ երեսն ի վայր ծնկի էին գալիս, այսպիսով օրէնքի ամէն տառը կատարելով: Սովորոյթը դեռ տարածուած է մինչեւ հիմա»*[55]: Հայկական մշակոյթում նոյնպէս ասեղնագործուել են խորանազարդ գորգեր[56], եկեղեցական վարագոյրներ[57]:

---

[52] *«Թուրքերը երբեք չեն գործում թռչնի, կենդանիների եւ մարդկային ֆիգուրներ, քանի որ իրենց կրօնը դա արգելում է»* (Lewis, *The Practical*, էջ 218):

[53] Dunn, էջ 130:

[54] Այսօրինակ ոճաւորմամբ աղօթագորգեր Նոր Ջուղայում գործել են նաեւ հայուհիները. մեզ է հասել հայատառ արձանագրութեամբ մի աղօթագորգ (Ի. Աւագեան, *Հայերէն արձանագրութեամբ գորգեր*, Հայաստանի պատմութեան թանգարան, Երեւան, 2010, էջ 71):

[55] Holt, էջ 94:

[56] Պահպանուել են Վանի ասեղնագործութեան դպրոցից հայատառ արձանագրութեամբ, սիւներով ու կանթեղով զարդարուած եկեղեցական ծածկոցի լուսանկար եւ 17-18 դարերով թուագրուող, Սուզանի կարատեսակով ասեղնագործուած խորանազարդ սրահակ (Մխիթարեան, էջ 61-62):

[57] Embroidered Armenian liturgical curtain, 1763, https://archive.org/details/clevelandart-2014.13-embroidered-armenian :

Այս կամարակապ գորգերը մեզ յիշեցնում են փոքրիկ տաճար: Դարերի սահումով կրօնը տեղաւորուեց մարդկանց կեանքում, եւ բնականաբար, կրօնի հանդէպ ըմբռնումը, կրօնական ոգին իր բացատրութիւնն է գտնում շրջապատող իրերում: Այս խորանապատկերով անհուն հեռապատկեր է ստեղծուել մարդու ընկալումներում: Դէպի վեր ձգուած կամարագծով նրանք արտայայտում էին մարդկային յոյսերի կապը երկնքի հետ:

Վերոնշեալ գորգերի բոլոր կամարաձեւերն իրենց տարաձեւութեամբ հանդիպում ենք հայկական մանրանկարչութեան տարբեր դպրոցների ու ժամանակաշրջանների խորանապատկերներում: Դրանք նախօրինակ են ծառայել ու արտացոլումն են գտել գորգերի գեղարուեստական յարդարման համակարգում: Այսպիսով, այս գորգերն իրենց մէջ բովանդակում են ազգային որոշ տարրեր՝ վերցնելով միջնադարեան քրիստոնէական մշակոյթի՝ ճարտարապետական եւ իմաստաւորուած զարդային ձեւերը, խորհրդանշական, գեղագիտական եզրերը:

Խորանազարդ աղօթագորգերն ունեն ծագումնաբանական, կիրառական, խորհրդաբանական եւ գեղագիտական դիտանկիւններ: Խորանները, որոնք գորգի բաղկացուցիչ ու առաջնային մասն են կազմում, չեն կարող միայն գորգանախշ ընկալուել, դրանք ունեն ճարտարապետական ծագում եւ ըստ ճարտարապետական ձեւերի՝ սիւների, կամարների համար կրում են անուանումը: Դրանց պատկերային նախատիպ դիտուել են եռանաւ եկեղեցիների ներքին կտրուածքը, սիւնազարդ կամարները, մանրանկարների խորանները, կամարախորշերի ուրուագծերը: Ճարտարապետութեան, մանրանկարչութեան եւ գորգարուեստի փոխադարձ կապը հիմք է տալիս գորգարուեստում որոնել մեզ համար կարեւոր հարցեր: Ինչպէս մանրանկարչութեան մէջ, այնպէս էլ գորգարուեստում պահպանուած են բազմաձեւ ճարտարապետական կամարներ, այստեղ եւս խորանների ձեւերը եւ պատկերային մոտիւները փոփոխւում, կրճատւում կամ հարստանում են ըստ տարածքի, ժամանակաշրջանի:

Պատկերազարդման գեղագիտական կողմից աւելի յարդարանքային են դարձել, երբեմն կամարներին փոխարինում են ուղղանկիւն գլխազարդերը՝ լցուած զանազան զարդանկարներով, դաշտի ներքին յարդարանքը հարստացուած է երկրաչափական, հիւսածոյ եւ բուսական զարդանախշերով, ինչպէս նաեւ որոշ խորհրդաբանական պատկերներով՝ բնորոշ միայն այս գորգերին: Խորանները պարզեցուած են՝ ստացել են գծագրական պարզ յարդարանքային տեսք:

Յիրաւի, այս գորգերը կրում են քրիստոնէական ճարտարապետութեան գեղայարդարման կնիքը:



Նկարներ 1.- Խարբերդ, 19րդ դարի առաջին կէս, 2՝ Վան, 20րդ դարասկիզբ

Նկարներ 3՝ 1901-2 թուականի աղօթագորգ, 4՝ Խարբերդ-Բալու, 19րդ դար

Նկարներ 5՝ Խարբերդ, Օւաջրկ, 20դդ դարի սկիզբ, 6՝ 1916

THE PRAYER RUGS OF THE NATIONAL MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY (SUMMARY)

ANI MKHITARYAN
amkhitaryan89@gmail.com

Due to their artistic decoration and particularly their design, prayer rugs are classified as alter rugs. They have a ritual significance. Today they are common in the Muslim world and are used during *namaz* prayers (*Aghotagorg* in Armenian). *Aghotagorg*s were widespread in Armenian carpet weaving culture and were made in large quantities. In fact, in addition to being used in churches, these were also used for commercial purposes. The Museum of Armenian Ethnography preserves about thirty *Aghotagorg*s (without columns) enriched with Armenian ornaments with symbolic significance. They differ in their types, variety of architectural arches and symbolic images. The paper divides the *Aghotagorg*s into two major groups: a) those having the interior design of an Armenian Church and b) those which have pillar designs. The paper focuses on the first group of *Aghotagorg*s and categorizes them according to their design.

Նկար 7՝ Արցախ, 19դդ դարի վերջ